



# Армянский Колледж

+7 904 506 91 28

# Учитесь АРМЯНСКОМ говорить на ЯЗЫКЕ

Частные уроки армянского языка  
тел. 8 904 509 68 76

## Գրական անկյուն



Տաթև Մաղաքյանը ծնվել է Վանաձոր քաղաքում: Մովսիսյանի և տեղի Վահան Տերյանի անվան թիվ 5 միջնակարգ դպրոցում: 1998-2002 թթ. սովորել և ավարտել է Վանաձորի 2. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի «Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա» բաժինը: Մտեղծագործում է դպրոցական տարիներից: Տասնյակ բանաստեղծությունների, նովելների, պատմվածքների հեղինակ է: Տաթև Մաղաքյանի հերոսը սիրո, հայրենիքի, բնության, կարոտի երգիչն է. այնքան իրական, կենդանի, որ ընթերցողն ակամա սկսում է ապրել նրանց հոգեբան, հոգեկան տվյալներով, սիրով ու տառապանքով: Նա էլ պանդուխտ հայի ճակատագրին արժանացած հայուհի է, ով, ապրելով հայրենիքից հեռու, սակայն, խոսում է հայերեն, ապրում է հայերեն, ստեղծագործում է հայերեն, կարոտում է հայերեն... Թող նրա մուտքը բարով պսակվի սփյուռքահայ գրականության ասպարեզ:

Մեր ընթերցողին ենք ներկայացնում Տաթևի ստեղծագործություններից մեկը:

### Ծիծեռնակները վերադարձել են

Մայիսական գլուխը ավերի մեջ առած, նստել էր գրասեղանի առջև: Նոր ծաղկած յասամանի ճյուղերը ներս էին մտել բաց լուսամուտից, հայացքը բակում էր՝ յասամանի ծառի տակ խաղացող թռուռիկների կողմը:

...Երբ ծնվեց առաջնեկը, ինքն, իր ձեռքով կառուցած տան բակում, յասաման տնկեց ու երեսունհինգ տարվա մեջ ոչ ոքի երբեք թույլ չտվեց քաղել ծաղիկները...

Հայացքը թռուռիների կողմն էր, մտքերը անցյալում...

...Սոնայի վարսերից յասամանի բույր էր գալիս: Անձրև էր, թաց հագուստը կպել էր մարմնին, բայց Սոնան նստել էր

մի քարի ու խաղում էր գետի ալիքների հետ, թե ալիքներն էին խաղում Սոնայի գեղեցիկ ոտքերի հետ: Աղջիկն ուներին թափված թաց մազափնջերը քամում էր գետի մեջ, ծիծաղում, ծիծաղում, ծիծաղում... Հեռվում կանգնած հետևում էր նրա ամեն մի շարժմանը, ոտքերը մեխվել էին տեղում, հանկարծ սիրտն ուզեց դառնալ վարար անձրև ու երկնքից թափվել, փաթաթվել Սոնայի մազերին, մարմնին, ոտքերին... Ուշքի եկավ ընկերոջ ձայնից, անձրևը խանգարեց բնության գիրկն եկած ուսանողների հանգիստը, պիտի վերադառնային քաղաք, մոտեցավ անձրևաձուլը մեկնեց աղջկան ու հեռացավ, քիչ հետո ավազանում արդեն բռնել էր քաղաք տանող ճանապարհը...

Սոնան, հանկարծ, առանց գգուշացնելու, առանց համաձայնության գալու, խուժել էր իր կյանք ու իր հետ բերել էր քունը խանգարող մոխրագույն աչքեր ու յասամանի բույր...

Հենց առաջին սեպտեմբերի մեկին հազար աղջիկների մեջ նկատեց նրան, ուրախությանը չափ չկար, երբ Սոնան մտավ նույն լսարանը, քիչ ուշացած մտավ և արագ տեղավորվեց առաջին նրստարանին ու յասամանի բույրը շուրջ հինգ տարի մնաց յարանում... Սոնան վերջում նստող Սուրենին չէր նկատում... Քանի-քանի անգամ փորձեց մոտենալ, քանի-քանի անգամ Սոնայի համար բերած յասամանները բաժանեց կուրսը-կերուհիներին, արդեն չի հիշում... Ավարտեցին, ավարտական երեկոյի ընթացքում խմեց, շատ խմեց ու մոտեցավ Սոնային, երկար խոսեց, բայց մոռացավ գլխավորն ու կարևորը...

Յասամանի բույրով արբած տուն եկավ, քնեց, առավոտյան տունը բուրում էր վարդերի բույրով մոր ընկերուհին աղջկա հետ եկել էր շնորհավորելու համալսարանն ավարտելու կապակցությամբ, իբր պատահաբար մայրն ու ընկերուհին դուրս եկան, ինքն օդում փնտրեց յասամանի բույրը, բայց վարդի բույր զգաց ու ձեռքերը ծակեցին վարդի փշերը... Անցել էր կես տարի, գանգաղեց ուսանողական ընկերն ու սասց, որ Սոնային գնացրով ճանապարհում են այլ երկիր, սիրտը փուլ եկավ, դադարեց բարխել, փվեց բազկաթոռին, յասամանի բույրը լցվեց սենյակն ու խանձվեց վարդի բույրին... Ճանապարհելու էկել էին մոտ ընկերներն ու բարեկամները: Աղջիկները հուզվել էին, իսկ Սոնան ծիծաղում էր, բուրդը հերթով հրաժեշտ էին տալիս, ինքն ամենավերջում մոտեցավ, Սոնայի հայացքը սիրեց, ինքը մի պահ կարկամեց, բայց գրկեց դեմքը, թողեց աղջկա երկար վարսերի մեջ, երկու խոշոր արցունք թրջեցին իր պարանոցը... Գնացքի

շարժվելուն չսպասեց, յասամանի բույրով պարուրված, երկու կաթիլ արցունք պարանոցին հեռացավ կայարանից... Տանը դարձյալ վարդի բույր էր ու վարդի փուշ: Մայրն, իբր նեղացած, սենյակից սենյակ էր անցնում, մոտեցավ մորն ու սկսեց համբուրել ճակատը, այտերը, մայրը դա համաձայնության նշան համարեց ու ընկերուհուն աղջկա հետ, դարձյալ տուն հրավիրեց... Մի քանի օր անց թեթև նշանդեք, մի քանի ամիս անց հարսանիք ու ճամփորդություն...

Ինքն ու կինը կանգնած են նույն կայարանում, սպասում են նույն գնացքին, որով Սոնան գնաց հեռու, հեռու... Թեև ձմեռ էր, բայց կայարանը յասամանի բույրով էր հարուստ... Օգնեց կնոջը բարձրանալ գնացք, իսկ երկու օր անց օտար երկիր, օտար քաղաք ու նորապսակներ... Վերադարձի նախորդ օրը հուշանվերների խանութում, ակնաչին մայրենի լեզվով խոսակցություններ հասան, շրջվեց, քարացավ. Սոնայի եղբայրներն էին, մոտեցան, ողջագուրվեցին բարեկամաբար, ներկայացրեց կնոջը, ասացին, որ վարդ վե: քաղաքում են տուն ու շուրջը նայելով ինքն իրենից թաքուն, հարցրեց Սոնայի մասին...

...Կնոջը մի կերպ հյուրանոց հասցրեց... Քիչ հետո, ինքը Սոնայի եղբայրների հետ, կանգնած էր թարմ հողաթմբի մոտ... Երեք ամիս առաջ, Սոնան ամուսնու հետ, մեքենայով բախվել էր մեծ բեռնատար մեքենային...

Մայիսական գլուխը ավերի մեջ առած, նստել էր գրասեղանի առջև... Հնչեցին տետրը վերնագրեց «Յասամանի բույր» և սկսեց գրել:

Սոնան իմ վերքն էր, մեղքն ու լացը... ...Եվ բակից լսեց Սոնա թոռան կանչը.

-Պապիկ, մեր ծիծեռնակները վերադարձել են...

Տաթև Մաղաքյան

# ՄԵՐ ՖՐՈՒՆԶՆ 85 ՏԱՐԵԿԱՆ Է

Արտիստի մեծությունը ճիշտ գնահատելու համար փորձեք նրա այս կամ այն դերում պատկերացնել մեկ այլ դերասանի, այսինքն նրան փոխարինեք ուրիշ դերասանով: Օրինակ մի պահ պատկերացնեք, թե «Կտոր մը երկինք» ֆիլմում Գրիգոր աղայի դերում Միեր Մկրտչյանը չի խաղում: Օրինակ ով կարող է Ֆրունզի կման ասել. «Կորա վ, թելը կորա վ...», կամ Թորիկին այնպիսի հայացքով նայել, որ էկրանից այս կողմ ամբողջ մարմնով փշաքաղվես ու մի բուռ դառնաս: Կամ ո՞ր դերասանը կարող է նրա նման հարցնել. «Դու կրնա ս սե թուղո՞ւ ուտել»:

Եթե մտաբերեք հայ կինոյի «թելավոր» խոսքերը, պապ կտեսնեք, որ դրանց մեծ մասը պատկանում է Միեր Մկրտչյանի կերտած կերպարներին: Ու ամենազարմանալիս այն է, որ մեր հիշողության մեջ մեխված այդ արտահայտությունները նրա իմպրովիզացիաներն են. դրանք արտիստը հենց նկարահանման ժամանակ է ասել, սցենարում դրանք չեն եղել: Պահի, իրարություն, կերպարի գարգացման, ներքին դրամայի այնպիսի զգացողություն, որպիսին Ֆրունզն ուներ, ուղղակի ֆենոմենալ հատկանիշ է անկրկնելի ու բնատուր:

Դեռ պատանի Միեր Մկրտչյանը հրապարակել է բեմարվեստով տեսնելով Վահրամ Փափազյանի խաղը: Մի անգամ Ֆրունզը նույնիսկ «Օթելլո» է խաղացել: Փափազյանն ասել է.

«Ամեն սե բան Օթելլո չե, մանչս»: Դերասան Լեոն Թուխիկյանը պատմում էր, որ Գյումրու տեքստիլի գործարանի թատերախմբում Ֆրունզն իր խաղով ուրախացնում էր բանվորներին: «Մե, պուճուր-մուճուր, մեծ քթով, վատ հագնված տղա էր, մեկ էլ հայտնվում էր բեմում, ու բոլորը ծիծաղեցին ուշաթափվում էին. դեռ բերանը չբացած, մի խոսք չասած հենց միայն նրա տեսքից այբողջ դահլիճը հռհռում էր: Ով կպատկերացներ, որ լենինականցի Ֆրունզիկը մեծ, հանճարեղ արտիստ է դառնալու: Բայց ես, որ դեռ մանկությունից նրա կողքին եմ եղել, գզում էի Ֆրունզի մեջ մի բան կա, որ հետո է բացահայտվելու, հետո ուղղակի հիպոստացնելու է բոլորին: Սկզբում ոչ ոք նրան չէր չէր վերաբերվում. տարեցները ոտքով խփում էին նրա քամակին ու ասում. «Օ՛ո, հելի բեմ, սարաղ, տեսնի՞րք հմի ի ն օյնբազություն բոյի էնես»:

Իսկ հետո Ֆրունզն արեց անբերելակայելին. տարիների հետ հասունացավ, կենսափորձը, կյանքի դառն ու քաղցրը նրան կոփեցին որպես մարդ: Ֆրունզն արեց այն, ինչ մինչ այդ ոչ ոք չէր արել. նա չխաղաց: Հենց դա է ամբողջ գաղտնիքը, ամբողջ հմայքը, ֆենոմենը: Ֆրունզը ոչ մի տեղ չի խաղում: Այդ պատճառով էլ այն արտահայտություններն ու գործողությունները, որ սցենարում չկային, բայց նկարահանման ժամանակ սեփական նախաձեռնությամբ ինքն արել

է, ներդաշնակ, համահունչ, շատ տեղին են: «Նվագախմբի տղաները» ֆիլմում, երբ լույսի ժամանակ են բռնցքով հարվածում են Դմբուզ Արսեն-Ֆրունզին, նա ցավից կծկվելով հարցնում է. «Ես ինչո՞ւ վ խփեցիր»: Ես պատասխանում եմ ձեռքով: Նա հարցնում է ճուտային ճիշտ է ասում: Ճուտն հաստատում է: Ֆրունզն ասում է. «Չե, սա ձեռքի բան չէր»:

Այս ամբողջը սցենարում չկար: Իրականում կովի ժամանակ իմ հարվածը մի քանի դուրբով փորձել ենք. չէր ստացվում: Ես գիտեի, որ Ֆրունզի վարդը ցավում է, ու խիղճս թույլ չէր տալիս նրան ուժեղ հարվածել: Իսկ ֆիլմին պետք էր, որ հարվածն ուժգին լիներ: Տեսա, որ ճար չկա, ուզեմ-չուզեմ պիտի պինդ խփեմ Ֆրունզին: Հարվածն իսկապես ուժեղ ստացվեց, ու նա ցավից այդ հարցը տվեց. «Ես ինչո՞ւ վ խփեցիր»:

Մենք դերասանները Խորիկ, Սոս, Շերենց, Ես, ինչքան էլ ուզենք, ինչ էլ անենք Ֆրունզի նման ժողովրդական սիրո չենք արժանանա: Նրա նմանները հազար տարին մեկ են ծնվում»,- պատմում էր Լեոն Թուխիկյանը:

Երբ Միեր Մկրտչյանի մասին խոսք էր բացվում, Խորեն Աբրահամյանը երկար լռում էր, հոգու եւ հիշողության անտակ խորքերը ողողում ծխախոտի թանձր ծխով ու խոսքոտ, ցածր ձայնով խոսում. «Ֆրունզը... Մենք պիտի Աստուծոն մինչեւ երկինք շնորհակալ լինենք, որ Ֆրունզ

ենք տեսել: Ֆրունզը... Այր իրականում նրան քչերն են մինչեւ վերջ ճանաչել: Նա արտիստ չէր, դերասան չէր, փիլիսոփա չէր, չգիտեմ ով էր նա: Նրա տեսակից էլ չկա, չի էլ եղել, որ համեմատենք, իմանանք, եզրակացնենք, թե ով էր Ֆրունզը: Այլ էն տակառը տեսնում էր. նա կկանգներ էլ տակառի կողքին ու մի էնպիսի հանճարեղ բան կհորիներ, կպատմեր, կխոսեր, կծիծաղեր, լաց կլիներ առանց սցենարի, հանապարաստից: Կշմեիր, կկարկամեիր. որտեղից էր գալիս էր ուժը, միտքը, անբացատրելի էր: Այլ հենց դա է ֆենոմենը, հանճարեղությունը, երբ բառերով չես կարողանում բացատրել տեսածդ ու զգացածդ: Ֆրունզն իր կյանքում ոչ մի գիրք չի կարդացել, գիտե՞ք. բայց հենց որ սկսեիր խոսել, ասենք, Դոստոևսկուց, Ֆլորենտինոյից, Մեյնինգից, Մեյնինգից, Մեյնինգից, նա այնպես կվերլուծեր, այնպես կպարզաբաներ, այնպես կներկայացներ, որ կթվար գրականագետ է, փիլիսոփա ու արվեստաբան է: Նա ի՞նչն իմաստուն էր, գիտե՞ք, չգիտեմ դեռ չծնված ով էր նրան այդ ամենը պատմել, բայց նա ամեն ինչ գիտեր: Եվ դու, որ Դոստոևսկուն ծայրից ծայր էս կարդացել, գետիկը կմտնեիր, որ Ֆրունզի իմացածի տասը տոկոսն էլ չես ճանաչում Դոստոևսկուն: Այլ էսպիսին էր Ֆրունզը», - ծխախոտի մշուշի մեջ ավարտում էր Խորեն Աբրահամյանը:



Սոս Մարգարյանը կյանքի վերջին ամիսներին անընդհատ Խորենի ու Ֆրունզի անունն էր տալիս, իսկ ավելի հաճախ Ֆրունզի: «Ինձ մենակ թողեցին, մանավանդ Ֆրունզը. շատ անխիղճ ընկեր դուրս եկավ, շուտ գնաց, պրծավ Ես աշխարհից, ինձ անտեր թողեց: Բայց ամեն գիշեր լսում եմ նրա ձայնը, կանչում է ինձ: ...Երեխա էր, մեծ երեխա: Մեքենայի վրա էր երեխայի գլխով եղբայր անձնական դժբախտություններ թափել», - դառնացած ասում էր վարպետը:

Այդպես էլ երբեք Միեր Մկրտչյանը կյանքն ու խաղացած դերերը չտարանջատեց. Գրիգոր արտան լինի, թե դարբին Գասպարը, փոստատար Նիկոլը, թե Սիրանուշի Ռուբենը, նրա կերպարները միով բանիկ մեկն են Միեր Մկրտչյան: Նրանք բոլորը Ֆրունզի էությունն են, նրա կյանքը կրանին, բեմում:

Նաիրի Մարգարյան